

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Ցեղասպանութեան Իրողութիւնը Քննարկման Առարկայ Չի Կրնար Ըլլալ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան վերջերս Տաւոսի Տնտեսական Ֆորումին Մասնակցութեան ամբիւրդում ունեցած է Ձուկցերիոյ Հայ Համայնքի որոշ թիւով անդամներուն հետ: Սոյն հանդիպումի ընթացքին վարչապետը պատասխանելով ներկայներէն մէկուն՝ Հայոց Ցեղասպանութեան վերաբերող հարցին ըսած է. «Մենք Հայոց Ցեղասպանութեան պատմութեանն էլ պէտք է վերադառնանք, պէտք է հասկանանք, լաւ ինչ է տեղի ունեցել եւ ինչու է տեղի ունեցել, եւ ինչպէս ենք մենք դա ընկալել, ում միջոցով ենք ընկալել, ոնց է, որ 1939 թուին Հայոց Ցեղասպանութեան օրակարգ չի եղել, եւ ոնց է որ 1950-ին Հայոց Ցեղասպանութեան օրակարգ յայտնուել է: Սա մենք պէ՞տք է հասկանանք, թէ՞ չպէտք է հասկանանք»: Վարչապետի այս անյաջող միտքերը, որքան որ ալ փորձես հասկնալ կը մնան անհասկնալի՝ ձգելով այն տպաւորութիւնը, որ վարչապետը կասկածի տակ կ'աւանդէ Ցեղասպանութեան իրողութիւնը եւ կամ կը ժխտէ զայն:

Այս բոլոր հարցադրումներուն պատասխանը հայ եւ օտար պատմաբանները տուած են արդէն հազարաւոր գիտական ուսումնասիրութիւններու եւ հատորներու միջոցով: Ժամանակաշրջանի միջազգային մամուլի էջերը ու դիւանագիտական հեռագիրներն ու փաստաթուղթերը եւս տուած են այդ հարցերուն պատասխանները: Այդ բոլորի աղաղակող պատասխանը տուած է տեղահանուած ու սփիւռք դարձած աշխարհացրիւ հայութիւնը:

Վերջին շրջանին վարչապետ Փաշինեան սկսած է մտային մարզանքներով հանդէս գալ՝ խօսելով իրական Հայաստանի ու պատմական Հայաստանի, Արագածի ու Արարատի, մեծ եղեռնի ու ցեղասպանութեան եւ այլ նիւթերու մասին: Այս օրերուն երբ հայութիւնը կը դիմագրաւէ բազում խնդիրներ ու լինելիութեան պայքար կը մղէ Հայաստանէն մինչեւ սփիւռք, նման օրակարգեր պէտք է դուրս մնան մեր ամենօրեայ քննարկումներէն, կեդրոնանալու համար շատ ակտիւ հրատապ հարցերու վրայ: Ամէն մէկ չմտածուած ու ժողովուրդի բազկերակին չհամապատասխանող արտայատուութիւն շուքի տակ կը ձգեն այն նուաճումները, որոնք արձանագրուեցան թաւշեայ

Շար.ը էջ 6

### Փաշինեան. «Մեր Որեւէ Ռազմավարական Ենթակառուցուածք Սահմանազատման Բերումով Չի Կրնար Մնալ Ուրիշին»

Հնարաւոր է արդեօք, որ սահմանազատման բերումով մեր որեւէ ռազմավարական ենթակառուցուածք՝ ճանապարհ ըլլայ, կազ ըլլայ, բարձունք ըլլայ, մնայ Ատրպէյճանին. Հանրային հեռուստաընկերութեան եթերով, պատասխանելով այս հարցումին, վարչապետ Նիկոլ Փաշինեան նշեց.

«Լսէք, մեր որեւէ ռազմավարական ենթակառուցուածք սահմանազատման արդիւնքում չի կարող մնալ ուրիշին: Սահմանազատման իմաստն այն է, որ միջազգայնօրէն ճանաչուած տէ՛ր իւր է սահմանները գծի վրայ, հողի վրայ արտայայտուեն: Հասկանում էք, Ձեր ասածը ընդհանրապէս հակոտնեայ է սահմանազատում դադարեցնել»:

Ան մանրամասնեց՝ սա կազատարագծում է, կազատարագատում է, սա սահմանազատում է:

«Մենք ունենք միջազգայնօրէն ճանաչուած սահման, որը պէտք է գետնի վրայ արտայայտուի, հասկանում էք, սահմանը պէտք է գետնի վրայ արտայայտուի եւ դա բխում է Հայաստանի Հանրապետութեան շահերից: Հիմա եթէ օրինակ կը լինեն իրադրութիւններ, երբ սահմանազատման յանձնաժողովները կը գան, այդ թւում՝ ենթակառուցուածքներ, մարդկանց կեանքի կազմակերպման համար անհրաժեշտ է այս տարածքը, որը տէ՛ր իւր է, այսինքն՝ գտնուում է մի երկրի տարածքում, բայց պէտք է, անհրաժեշտ է, որ այդ երկրի այդ տարածքները փոխանակուեն, այդպիսի իրադրութիւններ, այդ



Նիկոլ Փաշինեան հաղորդավար Պետրոս Ղազարեանի հետ հարցազրոյցի ընթացքին

թւում՝ ԵԱՀԿ-ի թողարկած սահմանազատման կանոնակարգերով, որոնց մեր ընդդիմութիւնը չդրում է անում, այնտեղ նախատեսուած են», - ըսաւ ան:

Վարչապետը մասնաւորեցուց՝ եթէ այդպիսի իրավիճակներ ծագին, ատիկա հնարաւոր է ընել միայն հանրաքուէի միջոցով:

«Եթէ սահմանազատման յանձնաժողովները կը գան եզրակացութեան, կ'ասենք՝ ժողովուրդ ջան, այս տարածքը տէ՛ր իւր է մի երկրի տարածքում է, բայց սահմանազատման յանձնաժողովները եկել են ըմբռնման, որ կարելի է այս տարածքը փոխանակել այս տարածքի հետ, յանձնաժողովները կարող են դա անել, ոչ չեն կարող դա անել, կարող են առաջարկել: Տե-

սականօրէն այո՛, տեսականօրէն, ես հիմա միանգամից ասեմ, որ հիմա այդպիսի թեմա չկայ, չի քննարկուել ոչ մի անգամ, բայց եթէ

Շար.ը էջ 6

### Ժամանակն է, Որ ԱՄՆ Պատասխանատուութեան Ենթարկէ Ատրպէյճանը. Ատամ Շիֆ



Ժամանակն է, որ ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը պատասխանատուութեան ենթարկէ «ատրպէյճանական վարչակարգը մարդու իրաւունքներու խախտումներու համար», յայտնած է ԱՄՆ դեմոկրատական ծերակուտական Ատամ Շիֆը:

Ան ուշադրութիւն հրաւիրած է այն հանգամանքին, որ Ատրպէյճանի մէջ «հայ քաղաքական բանտարկեալներու դատերը փակ տեղի կ'ունենան»:

«Պատշաճ իրաւական ընթացակարգը կը բացակայի: Լրատուամիջոցները չեն թույլատրուիր», - գրած է ան Ֆէյսպուքին մէջ:

Ատրպէյճանական բանտերուն մէջ դեռ 23 հայ կը պահուի, այդ շարքին՝ Ատրպէյճանի կողմէ Արցախի վրայ 2023-ի Սեպտեմբեր 19-ի ռազմական յարձակման հետեանքով գերեվարուած 16 անձեր:

### Ատրպէյճանը Հայաստանի Նկատմամբ Տարածքային Պահանջներ Չունի. Ալիեւ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ յայտնած է, որ Ատրպէյճանը Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներ չունի՝ չմոռնալով «երգել նոյն երգը», թէ «Ձանգեզուրի մասին չեն մոռցած եւ չեն մոռնար»:

Այս մասին ան յայտնած է փոխադրութեան հարցերուն նուիրուած հանդիպման ժամանակ:

«Ե՛ւ միջազգային մակարդակով, ե՛ւ Հայաստանի հետ երկկողմ շփումներու ընթացքին մենք անընդհատ կը շեշտենք մէկ խնդիր՝ պէտք է ապահովել Ատրպէյճանին Ատրպէյճան (Նախիջեան) անարգել անցումը, որ պէտք է ըլլայ յարմարաւէտ եւ ազատ՝ առանց որեւէ ստուգումներու եւ խոչընդոտներու», - ըսած է ան:

Ալիեւ յաւելած է, որ Ատրպէյճան գործնական քայլեր կը ձեռնարկէ, այսպէս կոչուած, «Ձանգեզուրի միջանցքը» բանալու համար:

Վերջինս նաեւ ըսած է, որ եթէ Հայաստան կը փափաքի իրական-



Ատրպէյճանի բռնապետ Իլհամ Ալիեւ

նացնել «Խաղաղութեան Խաչմերուկ» նախագիծը, ապա առաջին հերթին պէտք է դիմէ Ատրպէյճանին, քանի որ առանց Պաքուի այդ ընդամէնը «թուղթի կտոր» է:

# «Ազգային» Բառը Կայ Եւ Լինելու Է». Տարածուող Լուրերը Միայ Են

## ՍԻԶԱՆԱ ԳԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Վերջին օրերին մի շարք լրատվամիջոցներով (1, 2, 3, 4) լուրեր են տարածուել, թէ Հայաստանում գործող մշակութային կազմակերպությունների անուններից հանուելու է «Ազգային» բառը: Որպես օրինակ բերում էին Հայաստանի Օպերայի եւ բալետի ազգային թատրոնը, Ազգային պատկերասրահը, Ազգային գրադարանը եւ այլ մշակութային կառույցներ:

Լրատվամիջոցների հրատարակումներին հետեւեցին ֆեյսբուքյան օգտատերերի մտահոգությունները:

«Փաստերի ստուգման հարթակը» պարզել է, որ լրատվամիջոցները սխալ են մեկնաբանել օրերս Ազգային ժողովում քննարկուած եւ ընդունուած «մշակութային օրէնսդրութեան հիմունքների մասին» օրէնքում փոփոխութիւններ կատարելու մասին օրէնքը:

Բանն այն է, որ օրէնքով առաջարկուած է սահմանել մշակութային ոչ առեւտրային կազմակերպութեան կարգավիճակը:

Մշակութային առանձին կազմակերպութիւնների՝ թատերական, երաժշտական, պարարուեստի, կինոարուեստի, թանգարանային, գրադարանային եւ արխիւային, որոնք համապետական եւ համազգային նշանակութեան բացառիկ գործունէութիւն են իրականացնում, կարող է շնորհուել «համապետական» կարգավիճակ:

«Տարածքային» նշանակութեան կարգավիճակ շնորհուած է այն մշակութային կազմակերպութիւններին, որոնք իրենց գործունէութիւնն իրականացնում են մարզի շրջանակում՝ բաւարարելով մարզային բնակչութեան մշակութային պահանջները:

«Տեղային» նշանակութեան կարգավիճակ շնորհուած է այն



մշակութային կազմակերպութիւններին, որոնք իրենց գործունէութիւնն իրականացնում են համայնքի շրջանակում՝ բաւարարելով համայնքային բնակչութեան մշակութային պահանջները:

Գործող եւ նոր ստեղծուող մշակութային կազմակերպութիւններին «համապետական, տարածքային եւ տեղային» կարգավիճակ շնորհելու, փոփոխելու եւ դադարեցնելու կարգը, նախապայմանները եւ չափանիշները հաստատուած, ինչպէս նաեւ համապատասխան կարգավիճակը շնորհուած է Հայաստանի Հանրապետութիւնը՝ լիազօր մարմնի առաջարկութեամբ:

Փաստաթղթի անցումային եւ եզրափակիչ դրոյթների մէջ նշուած է, որ մինչեւ այս օրէնքի ուժի մէջ մտնելը ստեղծուած եւ գործող «ազգային» կարգավիճակ ունեցող կազմակերպութիւնները պահպանում են իրենց կարգավիճակը: Այսինքն՝ արդէն իսկ գործող, օրինակ, Օպերայի եւ բալետի ազգային թատրոն անունով միջոց «ազգային» բառը չի հանուել:

Կառավարութեան հեղինակած «մշակութային օրէնսդրութեան հիմունքների մասին» ՀՀ օրէնքում լրացումներ եւ փոփոխութիւններ կատարելու մասին «օրէնքի նախագիծը գործադիրը

հաստատել էր դեռեւս 2024 թ. Մայիսին: Համաձայն օրէնսդրական նախաձեռնութեան՝ «պետութիւն», «պետական» եւ «պետականութիւն» բառերի առաւել արժեւորման նպատակով անհրաժեշտութիւն է առաջացել կանոնակարգել «պետական» բառի օգտագործումը: «Սա առաջին հերթին պայմանաւորուած է այն հանգամանքով, որ «պետական» անուանումը կրող կազմակերպութիւնները ներկայում ունեն ե՛ւ համապետական, ե՛ւ մարզային, ե՛ւ համայնքային նշանակութիւն, մինչդեռ «պետական» անուանումը պէտք է շնորհուի համապետական նշանակութեան կազմակերպութիւններին: Հետեւաբար, պէտք է կիրառուի տարբերակուած մօտեցում: Ներկայում համապետական նշանակութեան կազմակերպութիւնների տարբերակումն իրականացուած է «ազգային» բառի օգտագործմամբ: Առաջարկուած է «պետական» անուանումը շնորհել միայն այն կազմակերպութիւններին, որոնք ունենք համապետական նշանակութիւն, «մարզային» անուանումը՝ մարզային նշանակութիւն եւ գործառնութիւն իրականացնող կազմակերպութիւններին, եւ «համայնքային» անուանումը՝ համայնքային գործունէութիւն ծաւալող եւ նշանակութիւն ունեցող կազմակերպու-

թիւններին», - նշուած էր օրէնսդրական նախաձեռնութեան հիմնաւորման մէջ:

Օրէնքի նախագծի շուրջ մեկնաբանութիւններ էր արել նաեւ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը, որն ավելի ուշ իշխանական պատգամաւորները հերքել էին (1, 2):

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրէասեանը, ճեպագրուցում ցուց տալով Ալեքսանդր Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի յուշամեդալը, որի սուփի վրայ գրուած է «Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոն», յայտարարել է՝ «ազգայինը» կայ եւ լինելու է: Յուսով եմ՝ սա անհետեւ խօսակցութիւնների վերջակէտը կը դնի, եւ մենք կը զբաղուենք իրական գործերով, ոչ թէ տարբեր տեսակի անհասկանալի տեղեկատուութիւն մեկնաբանելով»:

Այսպիսով, տարածուող լուրերը, թէ մշակութային կազմակերպութիւնների անուններից հանուելու է «ազգային» բառը, սխալ են: Օրէնքով կարգաւորուած են մշակութային կազմակերպութիւնների կարգավիճակները, այլ ոչ թէ անունները: Այսուհետ մշակութային կազմակերպութիւնները կ'ունենան «համապետական», «մարզային» եւ «տեղային» կարգավիճակներ:

«ՓԱՍՏԵՐԻ ՄՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿ»

## Մենք Փրկիչներ Չենք Փնտռեր Եւ Չենք Գտած.

## ԱԳ Նախարարը՝ Հայաստան-ԱՄՆ Նոր Փաստաթուղթին Մասին

Արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան ներկայացուց Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ստորագրուած ռազմավարական գործընկերութեան փաստաթուղթին մանրամասնութիւնները: Ազգային ժողովին մէջ հարցուպատասխանի ընթացքին նախարարը նշեց, որ փաստաթուղթը կը վերաբերի երկկողմ յարաբերութիւններու որակական բարելաւման եւ կ'ընդգրկէ համագործակցութեան բազմաթիւ ոլորտներ՝ տնտեսականէն մինչեւ անվտանգութիւն, ժողովրդավարութիւն եւ պաշտպանութիւն:

Արարատ Միրզոյեան փաստեց, որ այս ռազմավարական գործընկերութեան փաստաթուղթը կը բարձրացնէ Հայ-ամերիկեան յարաբերութիւններու մակարդակը:

«Ոլորտները բազմաթիւ են՝ սկսած տնտեսական համագործակցութիւնից, վերջացած անվտանգութեան, ժողովրդավարական եւ պաշտպանութեան ոլորտում համագործակցութեան: Սա շատ յաջողուած, բազմաոլորտ եւ լաւ հեռանկարներ բացող փաստա-

թուղթ է», - ընդգծեց նախարարը: Ան յաւելեց, որ այս փաստաթուղթով Հայաստանը չի փնտռեր «փրկիչներ» եւ կ'ակնկալէ սեփական ուժերով ամրապնդել իր դիրքերը:

«Մի մասը սասց, որ այս փաստաթուղթով փրկուեցինք: Ժողովուրդը ջան, չփրկուեցինք եւ պէտք է ընդհանրապէս փրկիչներ ման գալ: Ինչպէս պէտք է իր նախկինում փրկիչներ ման գալ հիւսիսում, հիմա պէտք է փրկիչներ ման գալ արեւմուտքում, արեւելքում եւ որեւէ տեղ: Եթէ մենք փրկուելու ձեւ ունենք, մենք ինքներս պէտք է այնպէս անենք, որ եւ փրկուենք, եւ զարգանանք, եւ ամրանանք: Մենք փրկիչներ չենք փնտռում եւ այս փաստաթուղթով էլ փրկիչներ չենք գտել», - ըսաւ Միրզոյեան:

Միրզոյեան նաեւ անդրադարձաւ այն մտահոգութիւններուն, թէ փաստաթուղթը կրնայ բացասական ազդեցութիւն ունենալ իրանի եւ Ռուսաստանի հետ յարաբերութիւններուն վրայ:

«Ես վերադարձել եմ Մոսկուայից աշխատանքային այցից,

իսկ արտաքին գործերի նախարարի տեղակալը՝ Թեհրանից: Մենք մեր գործընկերների հետ շատ սերտ կապի մէջ ենք, բազմաթիւ հարցեր համաձայնեցնում ենք եւ փոխըմբռնման մթնոլորտում աշխատում ենք», - ընդգծեց նախարարը:

Նախարարը յորդորեց չզերազնահատել եւ չթերազնահատել փաստաթուղթին կարեւորութիւնը՝ շեշտելով, որ այն պարզապէս Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ յարաբերութիւններու խորացման հնարաւորութիւն է, բայց ոչ ռազմական դաշինք:

Նախարարը անդրադարձաւ նաեւ փաստաթուղթի նախապատմութեան՝ նշելով, որ նախապէս Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ եղած է ռազմավարական երկխօսութեան ձեւաչափ, որ նախատեսած է պարբերական շփումներ եւ աշխատանքներ համապատասխան յանձնաժողովի մակարդակով: Սակայն, ըստ Միրզոյեանի, անհրաժեշտութիւն կար յարաբերութիւնները բարձրացնելու նոր մակարդակի:

**ՄԱՍԻՍ**  
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$75.00, \$150.00 (First Class)  
Canada \$ 250.00 (Air Mail)  
Overseas \$400.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ԼՈՒՐԵՐ

ՀՀ Արտաքին Ռեալիտիվիզմի Ծառայությունը Հայաստանի Դեմ Լայնածավալ Ռազմական Յարձակումը Հալածական Չի Գնահատեր

Ատրպեյջան-Հայաստան, 2024 թվականը նշանակալից է երկկողմ բարձրաստիճան հանդիպումներում, շփումներում եւ գրաւոր հաղորդակցութեան աշխուժութեամբ՝ հիմնականին մէջ շօշափելով յարաբերութիւններու բնականոնացման, խաղաղութեան համաձայնագրի բնագրի համաձայնեցման, սահմանի սահմանազծման ու սահմանազատման, ենթակառուցումներու ապաշրջափակման, մարդասիրական եւ այլ հարցեր: Մեծ հաւանականութեամբ 2025 թվականին Հայաստան-Ատրպեյջան տարբեր հարցերով բանակցութիւններու երկկողմ ձեւաչափերը պիտի շարունակեն մնալ մինչ այս կողմերու փորձանքներէն աւելի արդիւնաւէտը: Այդ մասին ըստած է Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Հետախուզութեան Ծառայութեան հրատարակած ՀՀ արտաքին վտանգներու վերաբերեալ 2025 թվականի տարեկան գեկոյցին մէջ:



Ծովի ծովերի եւ սրման յառաջացման վտանգը, որի որոշակի նուազեցման երաշխիք կարող է լինել 2024 թվականից մեկնարկած սահմանազատման եւ սահմանազծման գործընթացի սահուն շարունակութիւնը՝ համաձայն երկուստեք հաստատուած ընթացակարգի: Այս ծիրին մէջ Ծառայութեան խնդիրն է շարունակաբար գնահատել, թէ արդեօք Ատրպեյջանի կողմից Հայաստանի անկախութեան, ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան դէմ տարբեր վնասակար խօսույթներ հետեւողական գարգացումը եւ ֆինանսաւորումը Հայաստանի դէմ ուժի կիրառման սեփական մտադրութեան «օրինականացման» գրսելորում է: Այդ խօսույթներէն են այսպէս կոչուած «Արեւմտեան Ատրպեյջանի եւ արեւմտեան ատրպեյջանցիներին», «Հայաստանի ռազմականացման», «վրէժխնդրութեան», «Զանգեզուրի միջանցքի» խօսույթները»,- կը նշուի գեկոյցին մէջ:

Յոյս Ունիմ, Որ ՀՀ Իշխանութիւնները Կը Մասնակցին Հայրենական Մեծ Պատերազմին 80-Ամեայ Տարեդարձին. Դեսպան Քոփիթի



Հայաստանի մէջ Ռուսաստանի Դեսպան Սերկէյ Քոփիթիի Լենինկրատի ազտագրման 81-րդ տարեդարձին նուիրուած միջոցառման ժամանակ

Հայաստանի մէջ Ռուսաստանի դեսպան Սերկէյ Քոփիթիին յոյս յայտնած է, որ Հայաստանի իշխանութիւնները կը մասնակցին Հայրենական Մեծ պատերազմին տարած յղթանակի 80-ամեակին նուիրուած հանդիսաւոր միջոցառումներուն, որոնք տեղի պիտի ունենան Մայիս 9-ին, Մոսկուայի մէջ:

Ունիմ, որ ՀՀ Իշխանութիւնները կը մասնակցին հանդիսութիւններուն: «Ընթացիկ տարին պիտի ըլլայ բացառիկ, որովհետեւ տուեալ միջոցառումը կը բանալ շարք մը նախաձեռնութիւններու շղթայ, որոնք նուիրուած պիտի ըլլան Հայրենական Մեծ պատերազմին եւ Երկրորդ Աշխարհամարտին տարած յղթանակի 80-ամեայ յորելեանին: Յոյս ունիմ, որ Հայաստանի իշխանութիւնները նոյնպէս կը մասնակցին հանդիսութիւններուն:

Դատախազութիւնը Նոր Մեղադրանք Ներկայացուցած է Սէյրան Օհանեանին

2008-ի Մարտ 1-ի գործով Գլխաւոր դատախազութիւնն անոր մեղադրանք ներկայացուց ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան ղեկավար, պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանին:



Պաշտպանութեան Գախարար Սէյրան Օհանեան

Իրաւապահները Զինուած Ուժերու գլխաւոր շտաբի պետի պաշտօնը զբաղեցուցած Օհանեանը կը մեղադրեն Քրէական նոր օրէնսգիրքի՝ ուժի գործադրմամբ պաշտօնական լիազօրութիւնները անցնելու յօդուածով, որ ծանր հետեւանքներ յառաջացուցած է: Դատախազութիւնը կը պնդէ՝ նախկին բարձրաստիճան զինուորականը բանակը ներգրաւած է 10 մարդու կեանք խլած յետընտրական գործընթացներու մէջ:

Կրկին դատարանն են՝ Վճռաբեկ դատարանի որոշմամբ: Բարձրագոյն այս ատեանը բեկանած էր անոնց՝ դեռ ուժի մէջ չմտած արդարացման վճիռն ու գործը ուղարկած էր Հակափտածութեան քրէական դատարան՝ նոր քննութեան:

«Զինուած ուժերն օգտագործել է քաղաքական հարցերում խաղաղ հանրահաւաքների մասնակից քաղաքացիների դէմ», - նշեց մեղադրող դատախազ Հայկ Յովհաննիսեան:

Արդարացումէն երեք տարի անց երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանն ու անոր նախկին երեք բարձրաստիճան ենթակայները

Հայաստանի Մէջ Խօսքի Ազատութեան Վիճակը Եւ Լրագրողներու, Լրատուամիջոցներու Իրաւունքներու Խախտումները



Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի Գախարար Աշոտ Մելիքեան մամլոյ ասուլիսի ընթացքին

Հայաստանի մէջ խօսքի ազատութեան, լրատուամիջոցներու իրաւունքներու խախտումներու առումով 2024 թվականը լարուած տարի եղած է: Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէին հրատարակած գեկոյցին համաձայն՝ լրագրողներու եւ լրատուամիջոցներու իրաւունքներու արձանագրուած խախտումներու ընդհանուր թիւը կազմած է 208, նախորդ՝ 2023 թվականի 200-ին դիմաց: Դէպքերու աճի միտում կը նկատուի տարբեր ուղղութիւններով՝ ֆիզիքական բռնութիւն, ճնշումներ լրագրողներու, լրատուամիջոցներու նկատմամբ, տեղեկութիւններ ստանալու եւ տարածելու իրաւունքի խախտումներ: «Արմէնփրես»-ի մամուլի սրահին մէջ հրաւիրուած ասուլիսին Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի նախագահ Աշոտ Մելիքեան նշեց, որ ցուցանիշներու աճը պայմանաւորուած է երկրին մէջ ստեղծուած իրավիճակով:

է ալիքաձեւ զարգացումներով՝ պայմանաւորուած հասարակական-քաղաքական սրացումներով դրանց յաջորդող յարաբերական կայունութեամբ: Օրինակ, եթէ նախորդ տարուայ առաջին եռամսեակում լրագրողների նկատմամբ ֆիզիքական բռնութեան դէպք չի գրանցուել, ապա 2-րդ եռամսեակում 14 դէպք է գրանցուել՝ 23 տուժածով: Այդ կտրուկ աճը կապուած է քաղաքական շարժումների հետ: Ի դէպ, ֆիզիքական բռնութեան դէպքերի գերակշիռ մասը հէնց ցոյցերի ժամանակ է գրանցուել», - ըսաւ Աշոտ Մելիքեան:

Անյանգատացնող են ցուցանիշները տեղեկութիւններ ստանալու եւ տարածելու իրաւունքներու խախտումներու առնչութեամբ: Նախորդ տարուայ ընթացքին 122 այդպիսի դէպք արձանագրուած է: Տարուայ ընթացքին կարեւոր զարգացումներ տեղի ունեցած են լրատուամիջոցներու գործունէութիւնը կարգաւորող գլխաւոր՝ «Զանգուածային լրատուութեան մասին» ՀՀ օրէնքը արդիականացնելու ուղղութեամբ:

# ԼՈՒՐԵՐ

## Պէտք է Կառուցենք Բանակը Պաշտպանելու՝ Միջազգայնորէն ճանչցուած Սահմաններուն Անվտանգութիւնը. Նիկոլ Փաշինեան



Հայաստանի Ձինուած Ուժերու ստորաբաժանումներու քայլերթը

Հայաստանի Հանրապետութեան Ձինուած Ուժերու կազմաւորման 33-րդ տարեդարձին առիթով վարչապետ Նիկոլ Փաշինեան այցելած է Պաշտպանութեան նախարարութիւն: ԶՈՒ ստորաբաժանումներու մասնակցութեամբ նախ տեղի ունեցած է քայլերթ, որմէ յետոյ հանդիսաւոր նիստ՝ ԶՈՒ բարձրագոյն սպայակազմի մասնակցութեամբ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան հանդէս եկած են ելուցներով: Իր խօսքին մէջ վարչապետը, մասնաւորապէս, նշած է.

«Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերի առաջ կառավարութիւնը, հանրութիւնը, պետութիւնը պէտք է դնի միայն ու միայն միջազգայնորէն ճանաչուած տարածքների պաշտպանութեան եւ անվտանգութեան խնդիր: Եւ այս հենքի վրայ, այո՛, մենք իրականացնում ենք բանակի խորքային բարեփոխումներ, եւ այս հենքի վրայ մենք ունենալու ենք ուժեղ, պաշտպանունակ բանակ: Այս պարագայում ոեւէ մէկը չի կարողանալու կասկածի տակ դնել պաշտպանունակ բանակ ունենալու մեր իրաւունքը, ոեւէ մէկը կասկածի տակ չի կարող դնել բարեկեցիկ գինուորական ունենալու մեր իրաւունքը, ոեւէ մէկը կասկածի տակ չի կարող դնել ուժեղ պետութիւն, բարեկեցիկ եւ զարգացած պետութիւն ունենալու մեր իրաւունքը: Իսկ այդ պետութեան համար ասել եմ եւ կրկին ուզում եմ ասել՝ առանցքային է սպայական դասի գոյութիւնն ու գիտակցութիւնը:

«Մենք սա էլ պէտք է արձանագրենք, որ այո՛, բանակի, Ձինուած ուժերի եւ ընդհանրապէս սպայական դասն այն սիւնն է, այն ողնաշարն է, որի շուրջ կառուցուած է պետութիւնը: Այո՛, ճիշդ է նշում, որ մենք թերութիւնները չպէտք է թաքցնենք, բայց մենք չպէտք է

թաքցնենք ո՛չ բանակի թերութիւնները, ո՛չ կառավարութեան թերութիւնները, ո՛չ հանրային թերութիւնները, ո՛չ մասնաւոր հատուածի թերութիւնները:

«Դա էլ անարդար է, որ բոլորը նկատուած են բանակի թերութիւնը, սակայն ասում է՝ դիմացինի աչքի փուշը տեսնում ես, սեփական աչքի գերանը չես տեսնում: Սա է մեր ուղեգիրը՝ տեսնել բանակի թերութիւնները, բայց տեսնել բանակի թերութեան կապը մեզինից իւրաքանչիւրի թերութեան հետ, որովհետեւ բանակն օդից չէ, բանակը ձեւաւորուած է մանկապարտէզում, դպրոցում, թաղում, աշխատանքային անձնակազմերում: Բանակում այսօր չկայ թէկուզ մի խնդիր, թէկուզ մի թերութիւն, որը չի ծնուել բանակից դուրս: Այդպիսի խնդիր գոյութիւն չունի: Բանակի թերութիւնները ծնուել են բանակից դուրս, բոլոր խնդիրները, ուրիշ բան՝ այդ խնդիրները կարող են գալ բանակում զարգանալ մի փոքր, ձեւափոխուել, բայց չկայ որեւէ խնդիր, որի սեփականատէրը բանակն է, որ մենք կարող ենք ասել բանակն այս խնդիրը ստեղծեց: Գոյութիւն չունի այդպիսի խնդիր:

«Այսօր մեր բանակի 33-րդ տարեդարձն է, մենք Ազգային անվտանգութեան ռազմավարութեան մէջ, որը, ի հարկէ, առաջիկայում կը փոխուի եւ կը վերափոխուի, բայց մեր որոշմամբ բանակը ներառել ենք մեր պետական, մեր ազգային արժէքների առաջին տողերում: Այո՛, բանակը պետական արժէք է, ինձ համար առաջինը Հայաստանի Հանրապետութիւնն է, պետականութիւնը, անկախութիւնը եւ այդ պետականութեան ողնաշարը՝ բանակը, զինուած ուժերը, իսկ բանակը եւ զինուած ուժերը մարդիկ են առաջին հերթին:

## Փաշինեան Փետրուարի Պիտի Այցելէ ԱՄՆ

Փետրուարի սկիզբը կը նախատեսուի վարչապետ Նիկոլ Փաշինեանի այց ԱՄՆ, ըսած է վարչապետի մամուլի քարտուղարը:

Նազելի Բաղդասարեան ֆէյսպուքեան գրառման համաձայն՝ վարչապետը Ուաշինկթընի մէջ պիտի մասնակցի 5-րդ ամէնամեայ Միջազգային կրօնական ազատութեան զագաթաժողովին, ինչպէս նաեւ «Ազգային աղօթքի նախաձեռնին»:

Փագաթաժողովին Փաշինեան հանդէս պիտի գայ ելուցով: Այլ մանրամասնութիւններ խօսնակը չտ հաղորդած:

## Հայ-Պելառուսական Յարաբերութիւնները Խզումի Եզրին

Հայ-պելառուսական լարուած յարաբերութիւններու պայմաններուն մէջ հնարաւոր է Հայաստանը դիւանագիտական յարաբերութիւններու մակարդակը աւելի նուազեցնէ կամ որոշէ խզել զանոնք: Մինչ Արտաքին գործերու նախարարութիւնը կը լռէ, Ազգային ժողովի նախագահը կ'ըսէ՝ հարցը քննարկման ենթակայ է:

«Կարծում եմ՝ դա քննարկելու հարց է, եւ ես չեմ ուզում իմ կարծիքը եւ իմ դիրքորոշումը յայտնել: Կարծում եմ՝ մեր համապատասխան գերատեսչութիւնը, եթէ նման կարծիք լինի, դրա մասին կ'արտայայտուի», - ըսաւ Ալէն Սիմոնեան:

Վարչապետ Փաշինեանի որոշմամբ՝ աւելի քան կէս տարիէ Հայաստանէն ոեւէ պաշտօնեայ Պելառուսիա չ'այցելէր, Երեւանը Մինսքէն նաեւ դեսպանը ետ կանչած է, մինչ օրս ան Հայաստանի մէջ է, վերադարձի մասին խօսք չկայ: Այս ամէնուն պատճառը անցեալ տարուայ Մայիսին Լուքաշենքոյի՝ Արտաքին գործերի մէջ կատարած յայտարարութիւնն էր, թէ ինչպէս Պելառուսիոյ մէջ հաւատացած են Ատրպէյճանի յաղթանակին:

«Պելառուսը դեկավարող անձը այսօր փորձում է ստեղծուած իրավիճակից ինչ-որ ելք գտնել: Իսկ ի՞նչ է ստեղծուած իրավիճակը ստեղծուած իրավիճակը այն է, որ

## ԵՄ Դիւանագիտութեան Ղեկավար Գայա Քալաս Պիտի Ժամանէ Հայաստան

Եւրոպական Միութեան արտաքին գործերու եւ անվտանգութեան քաղաքականութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Գայա Քալաս մօտ ապագային պիտի ժամանէ Հայաստան:

Ազգային ժողովի եւրոպական համարկման յանձնաժողովի արտահերթ նիստին ժամանակ այս մասին յայտարարեց ՀՀ արտաքին գործերու փոխնախարար Պարոյր Յովհաննիսեան:

Յովհաննիսեան սպասուող այցի վերաբերեալ մանրամասնութիւններ չներկայացուց, սակայն նշեց, որ պիտի քննարկուին համագործակցութեան վերաբերող տարբեր հարցեր:

«Մօտ շաբաթներին կ'ունենանք Եւրոպական Միութեան բարձր ներկայացուցիչ Գայա Քալասի այցը Հայաստան», - տեղեկացուց Յովհաննիսեան՝ յաւելելով, որ կը նախա-



Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

ինքը բացէիբաց յայտարարել է, որ ինքը մասնակցել է եւ աջակցել է հայերի լայնածաւալ սպանութեանը Ղարաբաղի տարածքում», - ընդգծեց Ազգային ժողովի նախագահը:

Պելառուսիոյ նախագահը յաւելեալ լարուածութիւն հաղորդեց հայ-պելառուսական յարաբերութիւններուն: Լուքաշենքօ, որ 44-օրեայ պատերազմէն յետոյ կը շնորհաւորէր Ատրպէյճանը յաղթանակի առիթով, Փաշինեանը ուղիղ մեղադրեց Արցախի կորուստին համար:



Եւրոպական Միութեան բարձր ներկայացուցիչ Գայա Քալաս տեսուին նաեւ այլ բարձրաստիճան այցելութիւններ:

## Մարթօ Ռուպիոն Եւ Հաքան Ֆիտանը Խօսած ԵՆ Հայաստանի Եւ Ատրպէյճանի Միջեւ Կայուն Եւ Արժանապատիւ Խաղաղութեան Մասին

ԱՄՆ պետական քարտուղար Մարթօ Ռուպիոն հեռախօսազրոյց ունեցած է Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Հաքան Ֆիտանի հետ, որուն ընթացքին, ի թիւս այլ հարցերու, քննարկուած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ կայուն եւ արժանապատիւ խաղաղութեան կարելորութիւնը: Այս մասին յայտնած է ԱՄՆ Պետական քարտուղարութիւնը:

ԱՄՆ պետական քարտուղարը հաստատած է ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարելորութիւնը, Թուրքիոյ դերը որպէս ՆԱՅՕ-ի առանցքային դաշնակից եւ տարածաշրջանին մէջ

ընդհանուր շահերը: Ռուպիոն նաեւ ընդգծած է Սուրիոյ մէջ ներառական անցման անհրաժեշտութիւնը՝ երաշխաւորելով, որ նոր կառավարութիւնը թոյլ պիտի չտայ Սուրիային դառնալ միջազգային անհանգիստութեան աղբիւր եւ օտարերկրեայ միաւորները պիտի զրկէ իրենց նպատակներուն համար Սուրիոյ մէջ անցումային փուլը օգտագործելու հնարաւորութենէն:

ԱՄՆ պետական քարտուղարը նաեւ իր խորին ցաւակցութիւնը յայտնած է Թուրքիոյ «Պոլու» հիւրանոցին մէջ տեղի ունեցած ողբերգական հրդեհին առիթով:

### ՀՀ ԱԳ Փոխնախարարն Ու Սուրիոյ ԱԳ Նախարարը Միտքեր Փոխանակած Են Տարածաշրջանային Ձարգացումներու Շուրջ



Սուրիոյ արտաքին գործերու նախարար Ասատ Ալ- Շայպանի եւ Հայաստանի արտաքին գործերու նախարարի տեղակալ Վահան Կոստանեան Դամասկոսի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Հայաստանի արտաքին գործերու նախարարի տեղակալ Վահան Կոստանեան Յունուար 27-ին Դամասկոսի մէջ հանդիպում ունեցած է Սուրիոյ Արաբական Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Ասատ Ալ- Շայպանիի հետ: Այս մասին հաղորդագրութիւն տարածած է ՀՀ Արտաքին գործերու նախարարութիւնը:

Շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար՝ արտաքին գործերու նախարարի տեղակալը փոխանցած է Հայաստանի կառավարութեան յանձնառութիւնը՝ զարգացնել երկկողմ յարաբերութիւնները սուրիական կողմին հետ: Զրուցակիցները միտքեր փոխանակած են համագործակցութեան հնարաւոր ուղղութիւններուն վերաբերեալ:

Վահան Կոստանեան հաստատած է հայկական կողմին պատրաստակամութիւնը՝ աջակցելու

մարդասիրական եւ բարեփոխումներու իրականացման ոլորտներուն մէջ, ինչպէս նաեւ Սուրիոյ մէջ առաջնահերթութիւն համարուող տարատեսակ այլ ծրագրերուն:

Երկուստէք շեշտուած են Հայաստանի եւ Սուրիոյ ժողովուրդներուն միջեւ առկայ պատմական ամուր կապերը: Այս ծիրին մէջ աջակցութիւն յայտնուած է Սուրիոյ մէջ համերաշխութեան միտքերով ձեւաւորման եւ ներառականութեան ուղղուած ջանքերուն:

Զրուցակիցները միտքեր փոխանակած են տարածաշրջանային զարգացումներուն վերաբերեալ՝ ընդգծելով հարեւաններուն հետ յարաբերութիւններու կարգաւորման կարեւորութիւնը:

Սուրիական կողմը բարձր գնահատած է ՀՀ պատուիրակութեան այցը Դամասկոս: Պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է շարունակել շփումները:

### Պաքուի Դատարանը Մերժած Է Փոփոխել Արցախի Նախկին Ռազմաքաղաքական Ղեկավարութեան Խափանման Միջոցը

Պաքուի Ռազմական դատարանին մէջ շարունակուած է ԼՂ նախկին ռազմաքաղաքական ղեկավարութեան գործով շինծու «դատավարութիւնը»:

Ատրպէյջանական լրատուամիջոցներուն փոխանցմամբ՝ դատարանը մերժած է անոնց խափանման միջոց կալանքը տնային կալանքով փոխարինելու միջնորդութիւնը:

ԼՂ նախկին ղեկավարներու փաստաբաններուն մեծ մասը Պաքուի մէջ միջնորդութիւն ներկայացուցած էր անոնց խափանման միջոցը տնային կալանքով փոխարինելու վերաբերեալ: Նման միջնորդութիւն չէր ներկայացուած միայն Արաբիկ Յարութիւնեանի համար, քանի որ վերջինս առողջական վիճակի վերաբերեալ դժգոհութիւններ չէ յայտնած:

Նոյն դատարանին մէջ համաժամանակեայ ընթացող ԼՂ նախկին պետական նախարար Ռուբէն Վարդանեանին առնչուող նիստին դատարանը տուած է եւս 10 օր՝ վարդանեանին ու պաշտպանին շինծու գործի նիւթերուն ծանօթանալու համար: Անոր գործը կը քննուի ԼՂ նախկին ռազմաքաղաքական ղե-

կավարներու գործին առանձնացուած:

Նախորդ դատական նիստին Վարդանեանի պաշտպանը միջնորդած էր անոր գործը միացնել միւս ղեկավարներու գործին եւ քննել միասին, սակայն դատարանը մերժած էր այդ միջնորդութիւնը:

2548 դրուագով հաւաքուած կեղծ եւ ակնյայտ յորինուած ապացուցներու հիմքով որպէս մեղադրեալներ կ'անցնին ընդհանուր առմամբ 15 անձ՝ ԼՂ նախկին նախագահներ Արկադի Ղուկասեանը, Արաբիկ Յարութիւնեանը եւ Բակո Սահակեանը, ԼՂ Ազգային ժողովի նախկին նախագահ Դաւիթ Իշխանեանը, ԼՂ արտաքին գործերու նախկին նախարար Դաւիթ Բաբայեանը, ԼՂ պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականեանը, Պաշտպանութեան բանակի հրամանատարի նախկին տեղակալ Դաւիթ Մանուկեանը, ինչպէս նաեւ քաղաքացիական անձեր՝ Գարիկ Մարտիրոսեանը, Մելիքսէթ Փաշայեանը, Դաւիթ Ալաւրտեանը, Գուրգէն Ստեփանեանը, Լեւոն Բալայեանը, Մադաթ Բաբայեանը, Վասիլի Բեգլարեանը, Էրիկ Ղազարեանը:

### Առաջնագիծին Վրայ Մեծածաւալ Աշխատանքներ Կը Տարուին, Այս Ծաւալի Երբեք Չէ Եղած. Փորձագէտ



«Ապրի Արմէնիա» վերլուծական կեդրոնի ռազմական փորձագէտ Լեւոն Ներսիսեան «Ազատութեան» հետ հարցազրոյցի ընթացքին

«Եթէ վերցնենք սահմանային ենթակառուցուածքը՝ առաջնագիծ, կան բաւականին մեծ փոփոխութիւններ», - «Ազատութեան» հետ հարցազրոյցին ըսաւ «Ապրի Արմէնիա» վերլուծական կեդրոնի աւագ գիտաշխատող, ռազմական փորձագէտ Լեւոն Ներսիսեան:

Ըստ անոր՝ պաշտպանական շրջաններուն մէջ եւս աշխատանքներ կը տարուին, եւ ինչպէս նշեց, Հայաստանի մէջ այդ ծաւալի աշխատանքներ չեն եղած. «Շատ մեծ առարկաների մասին է խօսքը, բաւականին թանկարժէք, խօսքը գնում է մեթրներով պեթոնի մասին, բաւականին լուրջ ամբարներ, կրակային կէտերի մասին, որոնց, ես կարող եմ հաստատ

ասել, որ ոչ մի տիպի հրետանու արկ չի կարող վնաս դրան հասցնել»:

Փորձագէտը նկատեց՝ ռազմական պիւտճէն երեք անգամ աճած է, սակայն կարեւոր են նաեւ ռազմական դերակատարները:

Հարցումին, թէ կարելի է ըսել, որ այսօր գէնքի հիմնական մատակարարները Հնդկաստանն ու Ֆրանսան են, Ներսիսեան պատասխանեց. «Այո՛, ինձ թւում է, որ այստեղ որեւէ արդէն գաղտնիք չկայ, ամէն ինչ ցոյց է տալիս, որ Հնդկաստանն առաջին տեղում է, Ֆրանսան երկրորդ տեղում է: Տեղեկութիւն մնացած գործընկերների մասին այդքան չկայ, բայց ակնյայտ է, որ այդ թուերին դա չի հասնում այս պահին»:

### Եթէ Թուրքիա Քաղաքական Կամք Ցուցաբերէ, Հայ-Թրքական Յարաբերութիւններու Կարգաւորումը Կ'ըլլայ Ռուբինեան

Հայ-թրքական գործընթացները փակուողի մէջ չեն, բայց յառաջընթացներ ալ չենք տեսներ:

Լրագրողներու հետ ձեպագրուցի ընթացքին այս մասին ըսաւ ՀՀ Ազգային ժողովի փոխխօսնակ Ռուբէն Ռուբինեան:

«Դրա մեղաւորը Հայաստանը չէ, որովհետեւ ամէն ինչ արել է, որ կարգաւորումը տեղի ունենայ: Հայաստանը պատրաստ է թուրքիայի հետ հէնց վաղը ունենալ բաց սահմաններ, դիւանագիտական յարաբերութիւններ: Եթէ թուրքիան ունենայ քաղաքական կամք, դա տեղի կ'ունենայ: Չեմ կարծում, որ թուրքիայի կողմից կայ պատճառ սահմանը չբացելու, եւ մենք կարծում ենք, որ եթէ թուրքիան քաղաքական կամք ցուցաբերի, կարգաւորում կը լինի», - ըսաւ Ռուբինեան:

Ան տեղեկացուց, որ թուրքիոյ բանագնաց Սերտար Քըլըչի հետ վերջին անգամ հանդիպած է ամռան:

«Բոլոր միջազգային գործընկերները հասկանում են, թէ ինչ սպառնալիքների է բախուում Հայաստանը: Մեր բոլոր միջազգային գործընկերներից ակնկալում ենք աջակցութիւն ՀՀ ինքնիշխանութեանն ու տարածքային ամբողջականութեանը: Մենք ամէն ինչ պէտք է անենք, որ



ՀՀ Ազգային ժողովի փոխխօսնակ Ռուբէն Ռուբինեան

պատերազմ չլինի, պէտք է ամէն ինչ անենք, որ պատրաստ լինենք. եթէ մեր վրայ յարձակում լինի, դիմակայենք դրան: Պէտք է այնպէս անենք, որ միջազգային հանրութիւնը իր բոլոր ջանքերը ներդնի, որպէսզի այնպիսի բան չլինի», - ըսաւ ան:

Ըստ անոր՝ Հայաստան յառաջ կը մղէ խաղաղութեան օրակարգը, կը բարեփոխի իր պաշտպանական կարողութիւնները, կը բազմազանեցնէ իր արտաքին յարաբերութիւնները:

### Անքարայի Սեջ Քննարկուած Է Կարսի Անցակէտի Հնարաւոր Բացումը



Հայ-ատրպէյճանական կարգաւորման գործընթացին մէջ Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչ Սերտար Քըլըչի գլխավորութեամբ Անքարայի մէջ տեղի ունեցած է հանդիպում:

Քըլըչը Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարութեան Կովկասի եւ Միջին Ասիոյ ստորաբաժանման ղեկավարի տեղակալ Ալշէ Ուզգերի, ԱԳՆ ներկայացուցիչներ Արիֆ Էքմէքչի եւ Օնուգեր Աքիլինի հետ Անքարայի մէջ ընդունած է Կարսի Առեւտուրի եւ արդիւնաբերութեան պալատի կառավարման խորհուրդի նախագահ Քատիր Պոզանը, Խորհուրդի նախագահ Իտրիս Աճայը եւ Կառավարման խորհուրդի անդամները:

Հանդիպման ընթացքին քննարկուած է Կարսի մէջ «Արեւելեան դարպասներ» սահմանային անցակէտի բացումը եւ տարածաշրջանի դռները բանալու հնարաւոր ընկերա-տնտեսական հետեւանքները:

Սերտար Քըլըչ, մանրամասն ներկայացնելով գործընթացը, այն կարեւոր համարած է շրջանի ուերկրին համար:

Կարսի Առեւտրաարդիւնաբերական պալատի տնօրէններու խորհուրդի նախագահ Քատիր Պոզան հանդիպման ժամանակ իր ելոյթին մէջ ըսած է. «Մենք ուշադիր կը հետեւինք Ատրպէյճանի, Թուրքիոյ եւ Հայաստանի յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին եւ կը կարծենք, որ «Արեւելեան դարպաս»-ի բացումը Ատրպէյճանի, Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ խնդիրներու վերացումէն եւ կարգաւորումէն յետոյ մեծապէս պիտի նպաստէ ոչ միայն Կարսի, այլեւ տարածաշրջանի տնտեսական եւ ընկերային զարգացման»:

### Ցեղասպանութեան Իրողութիւնը Քննարկման Առարկայ Չի Կրնար Ըլլալ

Շարունակուած էջ 1-էն

յեղափոխութենէն ասդին: Որպէս վարչապետ, որ կը պատրաստուի յառաջիկայ ընտրութիւններուն, Փաշինեան պէտք է շարունակէ վերադառնալ ու բացառապէս խօսիլ իր օրօք կատարուած աշխատանքներու, արձանագրուած յաջողութիւններու ու ապագայ ծրագիրներու մասին՝ տնտեսութեան, քաղաքական ազատութիւններու, մաքուր կառավարման, բանակի կառուցման եւ այլ բնագաւառներու մէջ:

Հրապարակ նետելով մոր միտքեր ու անոնց շուրջ հանդէս գալով անյաջող ձեւակերպումներով Փաշինեան առիթ կու տայ իր հակառակորդներուն զինք մեղադրելու՝ ցեղասպանութիւնը ուրանալու եւ ազգային արժեքներէն հրաժարելու մէջ: Այս միտքերը լայն արձագանք կը գտնեն մասնաւորապէս սփիւռքի տարածքին, ուր բազմահազար հայերու համար ազգային մեր հաւատամքները կը մնան հայապահպանութեան գլխաւոր գրաւականները:

Որպէս Հայաստանի ներկայ իշխանութեան վարած քաղաքականութեան թիկունք կանգնած Կուսակցութեան պաշտօնաթերթ, մեզի համար եւս ցաւ է, որ վարչապետ Նիկոլ Փաշինեան առիթ կու տայ, որպէսզի զինք արատաւորեմ մեղադրանքներով, որոնք չեն արտայայտեր իր իսկական մօտեցումները:

Տակաւին մի քանի տարի առաջ ան իր Ապրիլ 24-եան ելոյթին մէջ կ'ըսէր. «Ովքե՞ր էին այդ սարսափելի յանցագործութիւնների մեղաւորները, ովքե՞ր էին դրա պատասխանատուները: Պատասխանը միանշանակ է՝ Օսմանեան կայսրութեան երիտթուրքական կառավարութիւնը՝ թուրքիզմի եւ պանթուրքիզմի գաղափարախօսութեամբ, որի առանցքային նպատակներէն էր մոռնալէն իր ծաւալապաշտական թուրքիայի ստեղծումը, ինչն իր հերթին ծնել էր հայատեացութեան ու ազգային ու կրօնական փոքրամասնութիւններից ազատուելու գաղափարը»:

Սերտար Քըլըչի խօսքը այն է, որ վարչապետը կառչի իր այս խօսքերուն ու կրկնէ զանոնք, որպէսզի փարատին բոլոր ենթադրութիւններն ու կասկածները ու անշարունակ կեդրոնացաւ մեր անկախ պետականութեան կայացման ու հզօրացման խիստ կարեւոր խնդիրներուն վրայ:

«ՍԱՍԻՍ»

### Մենք Փրկիչներ Չենք Փնտռեր

Շարունակուած էջ 2-էն

«2023 թուականի գարնանը

յայտարարեցինք, որ աշխատելու ենք յարաբերութիւնները բարձրացնելու ուղղութեամբ»:

### Հայ Դերասաններով «Անորա» Ֆիլմը «Օսքարի» Տարուայ Լաւագոյն Ֆիլմ Անուանակարգին Մէջ Է



Շոն Պէյքըրի «Անորա» տրաման Ամերիկեան ֆիլմի ակադեմիայի «Օսքար» մրցանակաբաշխութեան «Տարուայ լաւագոյն ֆիլմ» անուանակարգին մէջ է:

Ֆիլմը ներկայացուած է նաեւ լաւագոյն բեմադրիչ, լաւագոյն դերասանուհի, երկրորդ ծրագրի լաւագոյն դերասան եւ լաւագոյն բնօրինակ բեմադիր անուանակարգերուն մէջ:

Տարուայ լաւագոյն ֆիլմի կոչման համար կը պայքարին նաեւ «Պրոլիթալիսթը», «Լիարժէք անյայտութիւնը», «Քոնքլավ», «Տիւ-

նա Մաս երկրորդ», «Էմիլիա Փեռլեզ», «Ես դեռ այստեղ եմ», «Նիքել պոչ», «Սուպերմանի» ու «Չարը» ֆիլմերը:

97-րդ «Օսքար» մրցանակաբաշխութիւնը տեղի պիտի ունենայ Մարտ 3-ին:

Ազգութեամբ հայ դերասաններ Կարէն Քարակոչեանի եւ Վաչէ Թովմասեանի մասնակցութեամբ՝ բեմադրիչ Շոն Պէյքըրի «Անորա» ֆիլմը Քաննի 2024 թուականի ֆիլմի փառատօսին «Ոսկէ արմաւենիի ճիւղ» մրցանակին արժանացած է:

### Մեր Որեւէ Ռազմավարական Ենթակառուցուածք

Շարունակուած էջ 1-էն

այդպիսի վիճակ ծագի, նախ Կառավարութիւնը եթէ ընդունելի համարի՝ պէտք է գայ ժողովրդի մօտ, սախ՝ ժողովուրդ այսպիսի տարբերակ կայ, գնա՞նք այս տարբերակով, թէ՞ չգնանք: Ժողովուրդը կ'որոշի գնա՞նք, թէ՞ չգնանք:

«Ուզում եմ ուշադրութիւն դարձնենք, որովհետեւ գիծն ինքն էլ հաստութիւն, շերտ ունի, օրինակ՝ սահմանի վրայ, քարտէզի վրայ, որ գիծը գծուած է, ինքը մի միլիմէթր է չէ՞, բայց գետնի վրայ ինքը կարող է լինել չորս մէթր, երեք մէթր, մէկ մէթր: Ես այդպիսի իրավիճակների մասին չեմ խօսում, սովորաբար նոյնիսկ այդ մէթրերի ժամանակ սահմանային կէտը որոշուած է այդ լայնութեան մէջտեղը: Այդտեղ էլ խնդիր չկայ ընդհանրապէս»,- ըսաւ ան:

Ան չհամաձայնեցաւ քննադատութիւններուն, թէ մինչ Ատրպէյճանի ղեկավարութիւնը սպառնալից յայտարարութիւններով հանդէս կու գայ, ՀՀ վարչապետը հեծանիւ կը քշէ կամ օրինակ՝ տունէն փոքրաթիւ հանդէս կու գայ:

«Մենք հասկանում ենք, որ տարածաշրջանում եւ տարածաշրջանից դուրս կան ուժեր, որոնք խնդիր են դրել նոր սրում յառաջացնել, եւ այդ սրումների յառա-

ջացման կարեւորագոյն հատուածը, ամէն ինչ սկսում է լեզուակուռից, փորձ են անում մեզ ներքաշել լեզուակուռի մէջ», - ըսաւ ան՝ յաւելելով, որ իրենց որդեգրած ռազմավարութիւնն է թոյլ տալ սրում, ամէն ինչին ալ արձագանգել այնպէս, որ բացառէ սրումը, պատերազմը կամ առնուազն անոր համար հող նախապատրաստելը:

Վարչապետ Փաշինեան հերքեց քննադատութիւնները, թէ «ոչինչ կ'ընեն» Պաքուի մէջ գտնուող Արցախի նախկին ռազմաքաղաքական ղեկավարներու ազատման, վերադարձի ուղղութեամբ, յայտարարելով. «Ես ոեւէ մէկին իմ հակառակորդը չեմ համարում այստեղ գտնուող: Մենք մեզ հաշիւ ենք տալիս, որ այն, ինչ տեղի է ունենում, ոչ միայն լրջօրէն մտահոգիչ է, այլեւ օգտագործուած է եւ օգտագործուելու է տարածաշրջանում նոր սրումներ հրահրելու համար»:

«Աւելին, մենք հետախուզական տեղեկութիւններ ունենք, որ այդ մարդկանց նկատմամբ հոգեներգործուն արգելուած միջոցներ են կիրառում, որպէսզի տարածաշրջանային սրումները հրահրելուն ուղղուած խօսոյթներ, ցուցմունքներ կորզուեն նրանցից: Մենք շատ մտահոգուած ենք այդ գործընթացով», - յայտնեց ան:

գործընկերութեան մակարդակի: Եւ ահա 2024 թուականի Յունուարի 14-ին մենք ստորագրեցինք այդ փաստաթուղթը, որը մի քիչ փոխում է համագործակցութեան ձեւաչափը: Նշել ենք նոր ուղղութիւններ, նոր ոլորտներ, նաեւ նոր հնարաւորութիւններ», - նշեց Միրզոյեան:

Միրզոյեան շեշտեց, որ Հա-

յաստանի համար առաջնային են սեփական շահերը:

«Մենք ինքնիշխան երկիր ենք, եւ մեր բոլոր որոշումներն առաջնորդուած են բացառապէս Հայաստանի շահերով: Մեր բոլոր գործընկերները, ովքեր յարգում են մեր ինքնիշխանութիւնը, պէտք է յարգանքով մօտենան մեր դիրքորոշմանը», - եզրափակեց ան:

# Փա՛ռք Հայրենիքի Բոլոր Պաշտպաններուն (Հայկական Բանակի Հիմնադրութեան Օրուան Առիթով)



Ամուր պետականութեան մը չորս հիմնաստիւններն են՝ կրթութիւն, տնտեսութիւն, հոգեմտաւոր մշակոյթ ու բանակ: Իւրաքանչիւրն իր անփոխարինելի դերն ու տեղն ունի ազգակերտման եւ պետականակերտման առաքելութեան ճանապարհին: Եթէ մէկ օղակը թույլ է, կը տուժեն միւսներն ալ, եւ որպէս հետեւանք՝ ինքնաբերաբար կը սասանի պետականութեան վերնաշէնքը:

Ընդհանուր առմամբ, բանակի, գինուած ուժերու կամ ռազմարուեստի ոլորտը կը վերագրուի վալրագութեան, նախաշարձակումի, գաւթումի եւ կամ բրտութեան խրտչեցուցիչ երեւոյթներուն: Սա թիւրըմբուած է անշուշտ, մարդկանց միտքերը պղտորելու անյաջող հնարամտութիւն:

Դեռ եւս պատմութեան այգաբացին, աշխարհի կարգ ու կանոնի հիմնական սկզբունքներէն մին հանդիսացաւ ,ստաուի օրէնքեր, այսինքն՝ ուժով տիրանալու, իշխելու եւ պարտադրելու կանոնակարգը: Խաղաղասիրական բարեմաղթանքները շատ յաճախ բախեցան անտարբերութեան խուլ ականջներու: Մինչ խաղաղութեան աղաւնիին հաւատացողներ կը ներբողէին սիրոյ եւ համերաշխութեան բարեմասնութիւնները, քարոզներ կը բաշխէին բարի խօսքերով համեմուած, անդին՝ ուժին կառչած կայսրութիւններ, տիրակալներ եւ գորավարներ մահ ու աւեր կը սփռէին ամէնուր: Ուստի՝ խաղաղութեան աղաւնիին վերագրուեցաւ թուլութեան եւ վախուորածութեան հոգեվիճակը, իսկ՝ ռազմատենչ եւ գաւթիչ ուժին՝ արծիւի կամ բազէի կերպարով՝ հզօրի եւ անվախի հպարտաւիթ պատիւը:

Հայոց պատմութեան մի քանի հազարամեայ էջերուն մէջ այս երեւոյթը կարմիր թելի նման կ'անցնի անբաժանելիօրէն: Ռազմական, մշակութային, հոգեւոր ու բարոյական մաքառումները եղան մնայուն ներկայութիւն հայութեան կեանքին մէջ՝ նկատի առնելով հարեւաններու հետ տեւական գօտեմարտերը, արտաքին ոստիներու դէմ կատաղի գուպարները, կայսերական գորքերու դէմ անհաւասար ոգորումները, թշնամի կողմերու անյագուրդ ցանկութիւնները, երբեմն ալ՝ Արեւմուտքէն եկած գառնուկի մորթիներով ծապտուած գայլերու հրապուրիչ քարոզները՝ կրօնական շղարշով ծածկուած: Ուրեմն հայուն ճակատին վրայ դաջուած էր անսրբելի կնիք մը՝ վար չզնե՛լ

թուրն ու գրահը, մի՛շտ յեանել սուրն ու վաղակը, յաճախ իւղտե՛լ մօսիին ու մաուզէրը, պահեստի մէջ ունենալ վառօդն ու պարկուճը, քանգի ,ստաուի օրէնքեր կայ ու կը մնայ տիրականօրէն:

Հայաստանի տարածքէն ինչպիսի՞ գարմանագան փոթորիկներ եկան ու անցան: Հայոց երկնակամարը ինչպիսի՞ բազմադէմ կայծակներու նշաւակ դարձաւ: Օր մը Ասորեստանն էր, օր մը հոներ կամ սկիւթներ էին, ապա՝ պարսիկներ՝ Աքեմենեան կամ Սասանեան, մակեդոնացիք եւ ապա յոյներ ու Հռոմ՝ իրենց կուռ լեզոններով: Աւելի քան հազարամեայ կայսրութիւն Բիւզանդիան էր? Արաբական կայսրութեան որպէս անգիջող ախոյեան՝ ու մէջտեղը հայն ու Հայաստանը: Միջին Ասիայէն խուժող իսթամուժը՝ քոչուորներու բազմութեամբ՝ սելճուքներ, մոնկոլներ, թաթարներ, թուրքեր ու թիւրքմէններ չինայեցին ոչինչ իրենց կրնկակոխ արշաւանքներու ընթացքին: Խաչակիրներու, Բիւզանդիոյ եւ մեմլուքներու խարդաւանքները եղան անպակաս մեր շուրջ: Եւ աւելի ուշ՝ Օսմանեան բռնատիրութեան, Շահական Պարսկաստանի եւ Յարական կայսրութեան միջեւ հակամարտութեան ասպարէզ մը եղաւ մեր հայրենիքը, որ հեծեց, տքաց, հառաչեց եւ ստէպ պոռթկաց՝ մարդկօրէն եւ արդարօրէն:

Աջէն ու ահեակէն փչող այս մրրիկներուն դիմաց անհրաժեշտօրէն կարիքը կար հայկական գինուած ուժերու: Եւ սա բնական էր: Պետութեան մը հիմնատարներէն մին հանդիսանալով բանակը, հայկական թագաւորութիւններ եւ իշխանութիւններ ունեցան իրենց ռազմական միաւորները՝ որոնք տարբեր փուլերու հերոսաբար ճակատեցան տարատեսակ ուժերու դէմ: Դեռ պատմութեան խոր անցեալէն, հայկական գորամիաւորումներ կատարեցին իրենց պարտքն ու պարտականութիւնը: Ինչ հեռատես իմաստութեամբ մեր պատմահայրն ու քերթողահայրը՝ Մովսէս Խորենացի դարերու համար պատգամ մը բանաձեւեց մեր ժողովուրդին՝ «սահման քաջաց, գէնն իւրեանց»: Երեւի իմաստուն նահապետը մեր կանխագուշակած էր, որ հայրենի հողը պիտի պաշտպանուի եւ Հայաստանի սահմանները պիտի գծուին հայոց մարտիկներու սուրիններուն միջոցաւ: Երբ թուլանայ գէնքը՝ խոցելի կը դառնան հայրենական սահմանները: Իր հերթին, վարդանանց

պատերազմին վաւերագրողը՝ Եղիշէ պատմիչ, հայրենիքի պաշտպանութեան ճանապարհին անվեհերութեան եւ խիզախութեան համարժէք համարեց նահատակութեան վեհ ոգին, այսպէս բնութագրելով՝ «մահ իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ մահ է»:

Մեր արիւնալի բախումներուն առիժի բաժինը կը պատկանի Օսմանեան կայսրութեան դէմ ազգային ազատագրական կատաղի պայքարին: Չունէինք կանոնաւոր բանակ: Բացառուած էր նման բան՝ երբ ստրկացած էինք օսմանեան ժանտ շղթաներով: Թուրք ասկէրէն աւելի՛ քիւրտ հրոսակներ աւեր ու աւար կը սփռէին ամենայն սանձարձակութեամբ: Հայուն պայքարի արդար գէնքը բարձրացաւ թուրքին եւ քիւրտին դէմ միաժամանակ: Ապստամբական խլրտումներ, գինեալ ընդհարումներ, անհաւասար մարտեր արձանագրուեցան բազում վայրերու մէջ: Հայդուկային այդ խումբերը, ֆետայական շարժումն ու ապստամբական փորձերը մարտական ոգիի դրսեւորումներ էին՝ բանակային կարգապահութեամբ եւ ոգիով: Ահա 1862-ի Զէյթունի ապստամբութեան ընթացքին ինկած պատանի քաջորդի մը նահատակութեան առթիւ բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշլեան կը գրէ՝ «Վասն հայրենեաց մեռար՝ դու շատ ապրեցար»: Իսկ Հնչակեան մեծահամբաւ դեկավար Փարամագ կախաղաններու վրայ նահատակուողներուն ակնարկելով կ'ընդգծէ՝ «Հոն՝ ուր կախաղաններն են ձօճուած՝ ազատութիւնն է ման գալիս, հոն ուր մեռելներն են ննջում յարութիւնն է մօտալուստ», այսինքն՝ ազատութեան ի ինդիլ պայքարը՝ նահատակներով կը նուիրագործուի:

28 Յունուար 1992-ին պաշտօնապէս հիմնուեցաւ Հայաստանի երրորդ հանրապետութեան բանակը: Ան անցաւ արեան մկրտութեան դաժան բովէն: Արցախեան պատերազմի

բուրային մէջ թրծուած բանակը հերոսական ուղի անցաւ ազատագրելով Արցախն ու յարակից տարածքները: Փայլուն ու յաղթական մարտական ճանապարհ կրթողեց նորափթիթ հայոց բանակը: Ինչքան հերոսական գաւակներ յաւիտենապէս փարեցան հողին՝ գաջն գրկած՝ իյնալով առ յաւէտ:

Արցախեան փառապանծ յաղթանակը հայոց պատմական ռազմաժողովրդագրութեանն ապացոյցն էր անտարակոյս: Պատմութեան անհղափոք արձագանգը արդարեւ: Արդար գայլոյթի մը նորագոյն արտաշատութիւնը: Այն աւանդոյթին՝ երբ մարտիկներ, անձուիրաբար, իրենց մէջքերուն սուր կախած՝ կ'երթային մոլեգին պատերազմի եւ որոնց համար բանաստեղծ Դանիէլ Վարուժան կը գրէր՝

Արշալոյսին կառքն արդէն կը պատ մեր դըրան քով.

Պէտք է մեկնիլ: Սակայն հոն խառնուրդին մէջ հարուածի

Չըմոռնաս որ Սուրիդ վրայ իմ ոսկեղէն հերիւնով

Ես «Կեանք կամ Մահ» գրեցի:

Յաւօք, վերջին պատերազմը վիրաւոր թողուց մեր մօտիկ անցեալի փառահեղ պատմութիւնը: Հազարներ ինկան յանուն հողին: Սակայն, այսօր, վէրքերը բուժելու եւ վերանորոգուելու օրն է եւ ոչ լացի ու կոծի: Նաեւ՝ ոչ ալ քննադատութեան եւ խժեժանքի: Պարտինք ուղղել մեր մէջքը եւ գուսպ ու խոհեմ քայլերով մեր աչքերը սեւեռենք պայծառ հորիզոնին:

Փա՛ռք հայրենիքի պաշտպան հայոց անասան բանակին:

Խունկ ու յարգանք այն հազարաւոր նահատակներուն, որոնք երեւի իրենց վերջին բառերը շնչալով արտասանեցին՝ «Թէ մեռնեմ էլ չեմ ափսոսար, հողդ գրկած փառք է ինծի»...

Փա՛ռք հայրենի հողը յաւերժօրէն գրկածներուն:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ» Օրաթերթ Լիբանան

----- **Homenmen Ladies Auxiliary** -----  
**Lecture**

*How Do We Deal With Anxiety And Fear Of Another Natural Disaster !*  
*How Do We Handle The Loss In A Fire Situation ?!*

**BE GENTLE WITH YOUR MIND**

GUEST SPEAKERS

- SETA HAIG, LMFT
- ARPINE MANUKYUN, AMFT

February 13, 2025 // 7 PM

1060 Allen Ave, Pasadena, CA 91104

### Լիբանան Սարգիս Տխրունիի Նահատակութեան 96-Ամեակի Ոգեկոչում



Ամենամեայ բարի աւանդութեան համաձայն, այս տարի եւս Տխրունի Ուսանողական Երիտասարդական Միութեան վարչութիւնը պատշաճ ձեւով ոգեկոչեց հնչակեան գաղափարական աննկուն մարտիկ Սարգիս Տխրունիի յիշատակը:

Կիրակի, 26 Յունուար 2025-ի առաւօտեան, Նոր Հաճընի Սբ. Գէորգ եկեղեցւոյ մէջ, պատարագեց, քարոզեց եւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօնը կատարեց արժանապատիւ Տէր Նարեկ քհնյ. Հեճինեան, ներկայութեամբ Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի շրջանի վարիչ մարմինի ատենապետ ընկ. Վանիկ Տազնա-

Արարողութենէն ետք բոլոր ներկաները ուղղուեցան դէպի Փըրն էլ Շըպպէքի ազգային գերեզմանատան կուսակցութեան պանթէոնը: Հոն հոգեհանգստեան արարողութիւնը կատարեց Ռմէլլի Սբ. Յարութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ? Տէր Ղեւոնդ քհնյ. Լոշիսանեան: Այնուհետեւ Ս.Դ.Հ.Կ. Տխրունի Ուս. Երիտ. Միութեան անունով խօսք առաւ վարչութեան ատենապետը? ընկեր Սեւակ Իզմիրլեան (ընկերոջ խօսքը կը ներկայացնենք առանձին):

Ապա, բոլորը միասնաբար երգեցին Սարգիս Տխրունիի Պարծանք քեզի երգը, որմէ ետք տեղի



եանի եւ անդամներուն, Ազգային երեսփոխան? տիար Կիրակոս Տօնիկեանի, ՍԴՀԿ մասնաճիւղերու եւ յարակից միութիւններու վարչական պատասխանատուներուն, տխրունիական ընկեր ընկերուհիներու եւ համակիրներու:

ունեցաւ վարդերու զետեղում եւ մոմավառութիւն: Ներկաները մոմ վառեցին անմահ Տխրունիի շիրիմին եւ ապա Ուխտի եզեով վերանորոգեցին մեծ երախտաւորին սկզբունքներուն հաւատարիմ մնալու իրենց յանձնառութիւնը:

### Պոլսահայ Կեանք Երկու Հազար Մշակութասէրներ Ներկայ Եղան «Թամարի Ծակատագիրը» Ներկայացումին



Անցեալ Կիրակի, 26 Յունուարը՝ 2025 անջնջելի յիշողութիւն մը պիտի դառնայ պոլսահայ գաղութի համայնքային հարուստ պատմութեան փայլուն էջերուն վրայ: Արդարեւ, այդ օրը պիտի դրոշմուի որպէս թուական, երբ անգամ մը եւս, հայոց լեզուի այնքան առատ բառամթերքի ածականները, իրենց գերադրական աստիճաններով, քիչ պիտի գան նկարագրելու համար «Թամարի Ծակատագիրը» անունով երաժշտապարային ներկայացման առթած վայելքը, զգացումները՝ որոնք իրարմէ տարբեր հոգեվիճակներով, պարուրեցին մեզ ու գամեցին աթոռներուն վրայ, ստիպելով որ մէկ շունչով դիտենք ու ըմբոշինք «առասպելը»:

Դժուար է բառերով բացատրել ու նկարագրել մեր ապրածն ու զգացածը, թարգման հանդիսանալ հպարտութեան տրոփներուն, որոնք՝ բոլորիս սրտերուն մէջ ծուարած, մեզ «վկաները» դարձուցին հոյակապ ձեւերակիրն ու գեղարուեստով առլցուն օր մը պարգեւեցին բոլորիս:

գաթային ծրագիր մը իրագործեց թուրքիոյ ամենամեծ բեմերէն մէկուն վրայ:

Ուրախութիւն, որովհետեւ Մաժակ Թոշիկեան, որ երկար տարիներ ծառայեց թուրք «փօփ» երաժշտութեան, վերադարձած էր իր ակունքներուն ու հրաշալի գործ մը կը տեսնէ իր ժողովուրդին համար: Յուզում, որովհետեւ «Լուսաւորիչ» երգչախումբը եւ «Մարալ» անսամպլը, իրենց ոյժն ու եռանդը միացուցին, միասնական հոյակապ ձեւերակիր մը համար, փաստելով որ կրնան ու պէտք է որ ասկէ ետք հանդէս գան նոր նախաձեռնութիւններով:

Երախտագիտութիւն: Այս բառը կ'երթայ «Թամարի Ծակատագիրը» ներկայացման անզուգական մենակատարներուն եւ բոլոր մասնակիցներուն, որոնք մեծով ու փոքրով, մեր հոգիները թրծեցին «արուեստով» եւ «բալասան» եղան մեր ապրումներուն:

Ի վերջոյ... շնորհակալութիւն թուրքիոյ հայոց պատրիարքութեան ու անձամբ Պատրիարք հօր, «Լոյս Մետրա»ի պատասխանա-



Մաժակ Թոշիկեան, Կարպիս Զափբան, Յակոբ Մամիկոնեան, Պերճուհի Պէրպէրեան, «Մարալ» անսամպլը, «Լուսաւորիչ» երգչախումբի կորիզով կազմուած «Ախթամար» սենեկային երգչախումբը՝ հաւաքական աշխատութեամբ յաջողեցան աննախընթաց մշակութային գլուխ գործոց մը զայն որպէս նոր տարուան առաջին թանկագին նուէր հրամցնել համայնքին, արուեստի ճամբով... Վանայ լճի «Ախթամար» կղզիի բուն ինքնութեան:

Ինչ էր մեր ապրածն ու զգացածը:

Նախ եւ առաջ՝ հպարտութիւն, որովհետեւ 50 հազարանոց համայնքի ծոցէն հասած 200 հոգի-նոց «Ախթամար»ի ընտանիքը՝ գա-

տուներուն, էսպէս Սանուց Միութեան, որոնք պատմութիւն կերտեցին... պատմութեան ընդմէջէն:

Եթէ լացինք՝ ուրախութեան արցունքներ հոսեցան մեր աչքերէն: Եթէ մեր սիրտերու բաբախումները միացան՝ միացան յաւերժութեան կանչով, եթէ մեր ձեռքերուն ափերը ցաւեցան ծափերէն՝ ուրեմն արուեստի ճամբով յաղթութեան բերկրանքի ջրով մաս դարձաւ մեր մարմինին ու հոգիին:

Երախտապարտ ենք բոլորին: Դժուար է յիշել թէ վերջին անգամ ե՞րբ պոլսահայ մշակութային խումբը բեմ ելած էր Աթթաթիւրք Մշակութի Կեդրոնէն ներս: Հսկայ սրահը՝ ամբողջութեամբ լեփ

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ  
(200 ԸՈԳԻ ԸԱՍԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ**  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

## Armenians Detained in Baku Subjected to Banned Psychotropic Methods to Extract Testimonies, Says PM Pashinyan



YEREVAN — Prime Minister Nikol Pashinyan has denied criticism suggesting that the government is “doing nothing” to secure the release and return of former political and military leaders of Artsakh detained in Baku. He stated:

“I do not consider anyone there to be my adversary. We understand that what is happening is not only deeply concerning but is also being used—and will continue to be used—to provoke new escalations in the region.”

He further revealed, “Moreover,

we have intelligence indicating that banned psychotropic substances are being used against these individuals to extract testimonies or statements designed to provoke regional escalations. We are deeply concerned about this process.”

“This trial is being used against the Republic of Armenia. It is highly likely that banned psychotropic substances are being used to extract testimonies from these individuals, which can then be exploited in various ways against Armenia. We understand this issue deeply and comprehensively,” Pashinyan said in an interview, empha-

